ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 10-ից 15-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Տիգրան Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Վաշինգտոն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2022 թվականի հոկտեմբերի 10-ից 15-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Համաշխարհային բանկ (ՀԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Համաշխարհային բանկի խմբի և Արժույթի միջազգային հիմնադրամի տարեկան հանդիպումներին՝ որպես Համաշխարհային բանկի կառավարիչների խորհրդում Հայաստանի Հանրապետության կառավարիչ:

6. **Քննարկված թեմաները՝**

ԱՄՀ/ՀԲ 2022թ. տարեկան հանդիպումների շրջանակներում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են համաշխարհային տնտեսությանը, միջազգային զարգացմանն ու գլոբալ ֆինանսական համակարգին առնչվող հարցեր: Բացի այդ, երկկողմ հանդիպումների ընթացքում կողմերն անդրադարձել են Հայաստանի հետ ընթացիկ և հետագա համագործակցությանն առնչվող հարցերին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ԱՄՀ/ՀԲ 2022թ. տարեկան հանդիպումների ընթացքում, ի թիվս այլնի, առանձին երկկողմ հանդիպումներ են կայացել ԱՄՀ և ՀԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև առանձին երկրների պատվիրակությունների հետ, մասնակցություն է ապահովվել ԱՄՀ/ՀԲ 2022թ. տարեկան հանդիպումների լիագումար և Հայաստանն ընդգրկող՝ ԱՄՀ ու ՀԲ ընկերակցային խմբերի միասնական նիստերին: Մասնավորապես, կայացել են ներքոհիշյալ հանդիպում-քննարկումները:

Տարեկան հանդիպումների շրջանակներում կայացել է ԱՄՀ/ՀԲ 2022թ. տարեկան հանդիպումների լիագումար նիստը, որի ընթացքում քննարկվել են ԱՄՀ-ի և ՀԲ-ի գործունեությանն առնչվող ընդհանուր հարցեր, քվեարկության են դրվել տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատմանը վերաբերող բանաձևեր:

Մասնակցություն է ապահովվել ԱՄՀ-ի և ՀԲ-ի՝ Հայաստանն ընդգրկող ընկերակցային խմբերի միասնական նիստին, որը մեծ մասամբ նվիրված էր համաշխարհային տնտեսության ներկա զարգացումներին և տարածաշրջանային երկրների վրա ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքներին: Ընկերակցային խումբը ներկայացնող Գործադիր տնօրենների կողմից անդամ երկրներին է ներկայացվել Ընկերակցային խմբի շրջանակներում իրականացված աշխատանքները, ԱՄՀ/ՀԲ քաղաքականության հիմնական ուղղությունները:

ՀԲ խմբի Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի փոխնախագահ Աննա Բյերդեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ՀԲ խումբ համագործակցության օրակարգային հարցերն ու գործընկերային հարաբերությունների հետագա խորացման հնարավորությունները, այդ թվում՝ ՀԲ-ի կողմից ՀՀ կառավարությանը մի շարք ոլորտներում բարեփոխումներին աջակցության նպատակով տարբեր գործիքների միջոցով տրամադրվող աջակցությանն առնչվող հարցերը:

ԱՄՀ տնօրենների խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Փոլ Հիլբերսի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են համաշխարհային տնտեսությունն ու առկա մարտահրավերները, ինչպես նաև Հայաստանի հետ ընթացիկ համագործակցությանն առնչվող հարցեր: Հանդիպման շրջանակներում անդրադարձ է կատարվել ԱՄՀ-ի հետ մեկնարկող նոր կանխարգելիչ ծրագրի նախապատրաստական աշխատանքներին: Ինչպես Ա. Բյերդեի հետ, այնպես էլ Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ) ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում հայկական կողմը

հայտնել է ՄԶԸ դոնոր դառնալու պատրաստակամության մասին, և քննարկվել են ՄԶԸ կապիտալի 20-րդ համալրման գործընթացին ՀՀ մասնակցության ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հանդիպում է կայացել նաև ՀԲ տնօրենների խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Կուն Դավիդսեի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել ՀԲ-Հայաստան համագործակցության ընդհանուր շրջանակին:

Այցի ընթացքում հանդիպում է կազմակերպվել նաև ԱՄՀ Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի վարչության պետ Ջիհադ Ազուրի հետ: Հանդիպման ընթացքում դարձյալ ներկայացվել է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը, քննարկում է ծավալվել արդի տնտեսական գլոբալ մարտահրավերների շուրջ:

Քաղաքավարական հանդիպում է կայացել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) տարածաշրջանային նոր կառավարչի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում մասնավոր հատվածում ՄՖԿ-ի կողմից կատարվող ներդրումներին: Ընդգծվել է մասնավոր ոլորտում ներդրումների հետագա ընդլայնման կարևորությունը:

Առանձին հանդիպում է կայացել նաև ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերով վարչության հետ, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի հետ առկա համագործակցությունը, կարևորվել են ԱՄՀ տեխնիկական աջակցությամբ Հայաստանում իրականացված ոլորտային բարեփոխումները: Անդրադարձ է կատարվել ընթացիկ բարեփոխումների մի շարք ուղղություններով ԱՄՀ տեխնիկական աջակցության հնարավորություններին, միաժամանակ, ներկայացվել են հարկաբյուջետային քաղաքականությանն առնչվող բարեփոխումների, կարողությունների զարգացման ուղղությամբ ԱՄՀ-ի կողմից տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունները, մասնավորապես նաև նոր մեկնարկելիք ԱՄՀ ծրագրի շրջանակներում:

Առանձին հանդիպումներ են կայացել նաև ՀԲ ոլորտային (ջրային, առողջապահական, կոշտ թափոնների կառավարման) թիմերի հետ, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանում ոլորտային տարբեր ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման հնարավորություններն ու հեռանկարները:

Մասնակցություն է ապահովվել ԱՄՀ գործադիր տնօրենի տեղակալ Բո Լիի գլխավորությամբ Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների կառավարիչների և

ֆինանսների նախարարների համատեղ քննարկմանը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների տնտեսական հետևանքներին, ԱՄՀ անդամ երկրների կողմից գնաճային ճնշումների հակազդմանն ուղղված քաղաքականություններին և ԱՄՀ-ից ակնկալվող աջակցությանը:

Տարեկան հանդիպումների շրջանակներում կայացել է ՀԲ «Մարդկային կապիտալի ծրագիր» նախարարական ժողովը՝ «Պաշտպանելով և հզորացնելով մարդկային կապիտալը համաշխարհային պարենային ճգնաժամի պայմաններում» խորագրով: Ժողովի ընթացքում անդամ երկրների ֆինանսների նախարարները և ներգրավված այլ անձինք քննարկել են համաշխարհային պարենային ճգնաժամի պայմաններում կառավարությունների կողմից իրականացվող սոցիալական պաշտպանության միջոցառումների և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտությունը, ֆինանսների նախարարները կիսվել են իրենց երկրի փորձով՝ ուղղված պարենային գների շոկերի հակազդմանը:

Առանձին հանդիպում է կայացել նաև Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարար, փոխվարչապետ Սիգրիդ Քաագի հետ, որի ընթացքում քննարվել են երկու երկրների ֆինանսների նախարարությունների միջև համագործակցության խորացման հնարավորությունները, այդ թվում՝ գիտելիքի և փորձի փոխանակման ճանապարհով: Հանդիպման ավարտին ՀՀ ֆինանսների նախարարության և Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության միջև ստորագրվել է երկկողմ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր:

Հանդիպում է կայացել նաև «J.P. Morgan» ընկերության ներկայացուցիչների հետ, որին հաջորդել է կլոր-սեղան քննարկում մի շարք ներդրողների հետ: Միջոցառումների ընթացքում ներկայացվել է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը, ներդրումային միջավայրը, ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգն ու քաղաքականության հիմնական առաջնահերթությունները:

Մասնակցություն է ապահովվել նաև Հարկային և ներդրումային միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված հանդիպմանը, որի ընթացքում Եվրասիա տարածաշրջանի ֆինանսների նախարարները մտքեր են փոխանակել հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների հարցերի շուրջ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարի հետ կայացած հանդիպման ընթացքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարությունների միջեւ «Տեխնիկական համագործակցության մասին» 2023-2026թթ. համար փոխըմբռնման հուշագիրը, որը նպատակ ունի՝ ընդլայնելու կողմերի միջև համագործակցությունը հանրային ֆինանսներին առնչվող գիտելիքի, փորձի և տեղեկատվության փոխանակման ուղղությամբ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

20.10.2022թ.